

## I

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՂՈՆՑԻ  
ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՈԶԱԿԻ ՏԵՐ ԲՅՈՒԶԱՆԴԱԳԵՏՆ ՈՒ ՀԱՅԱԳԵՏԸ\*

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

<https://doi.org/10.52853/01350536-2021.2-7>

Բանալի բառեր՝ Ն. Աղոնց, Սանկտ Պետերբուրգ, Հայագետ, բյուզանդագետ, կոթողային աշխատություններ, Բրյուսել, Փարիզ, Հայկական հարց, Հայոց եկեղեցի, բազմալեզու:

## Նախաբան

Նիկողայոս Աղոնցն այն նշանավոր հայ գիտնականներից էր, որոնք ստացել են փայլուն կրթություն Ռուսաստանում ու Եվրոպայում:

Ծնվել է Սյունիքի Բունակոթ գյուղում 1871 թ. հունվարի 10-ին՝ քահանայի ընտանիքում: Նրա հայրը և մայրը ծագումով ազնվականներ էին: Սկզբնական կրթությունը ստացել է Բունակոթի ծխական դպրոցում, այնուհետև սովորել է Տաթևի վանական դպրոցում, հետո ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Թիֆլիսում գերազանցությամբ ավարտել է ռուսական գիմնազիան, որի ավարտական վկայականում Տեր-Ավետիքով ազգանունը Աղոնցի համառ կամքի շնորհիվ դարձել է Աղոնց:

Պետերբուրգի համալսարանում սովորելիս և հետագայում շուրջ երկու տարի Եվրոպայի նշանավոր կրթական կենտրոններում՝ Լոնդոնում, Փարիզում, Վիեննայում, Ստրասբուրգում, Մյունխենում, ուսման մեջ կատարելագործվելիս Աղոնցն ունեցել է ազգային մեծ բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի հովանավորությունը: Եվրոպայում ուսանելու տարիներին սերտ կապեր է հաստատել Վենետիկի Սուրբ Ղազար կղզու և Վիեննայի Մխիթարյանների միաբանների հետ և օգտվել նրանց մատենադարաններում պահվող ձեռագրերից ու տպագիր եզակի գրքերից:

Աղոնցն ազատորեն տիրապետում էր ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն լեզուներին, հրաշալիորեն վարժ էր բյուզանդական հունարենի մեջ, գիտեր լատիներեն, հին հունարեն, վրացերեն, արաբերեն, սանսկրիտ, պահլավերեն, կարդում էր տարբեր ազգերի սեպագրերը:

Աղոնցի կենսագրության վերաբերյալ կարևոր փաստեր է հաղորդում Բրյուսելի համալսարանում նրան աշակերտած Մուշեղ Իշխանը, որը տպագրել է եզակի հուշեր իր մեծ ուսուցչի մասին: Այդ հուշերում երևում է և՛ հայրենասեր հայ գիտնականը, և՛ մանկավարժը, և՛ մեծ հեղինակություն

\* Ներկայացվել է 25. V. 2021 թ., գրախոսվել է 11. VI. 2021 թ., ընդունվել է տպագրության 15. VI. 2021 թ.:

ունեցող միջազգային հռչակի տեր գիտնականը: «Չկարծեք, — ասում էր Ադոնցը, — թե գյուտերը միայն քիմիական կամ մեքենագիտական աշխարհի մեջ են տեղի ունենում: Մեծագույն գյուտն է, և հանճարեղ մտքի գյուտը, երբ մի բանասեր հաջողեցնում է մի բառի վրա հիմնված ժողովրդի քաղաքակրթության անցյալ մեկ շրջան վերականգնել կամ ցեղաբանական կազմութունը ճշտել և կամ մի դեպք իր ժամանակաշրջանի մեջ տեղավորել»<sup>1</sup>:

Պետերբուրգի համալսարանում սովորելու տարիներին Ադոնցի գիտական աճին սրտացավորեն և ուշադիր հետևել են երկու կարևոր անձիք: Առաջինը նշանավոր արևելագետ, հայագետ, կովկասագետ Նիկողայոս Մառն էր, երկրորդը՝ Ռուսաստանի պետական պաշտոնյա, հայագետ Կարապետ Եզյանը: Այդ երկու անձերի հետ ունեցած կապի խոսուեն վկաներն են այն ուշագրավ նամակները, որոնք Ադոնցը տարբեր տարիների ուղղել է նրանց:

Բոլոր դեպքերում Ադոնցը որպես գիտնական ձևավորվել է Սանկտ Պետերբուրգի համալսարանում: Այդ համալսարանը հիմնադրվել է 1819-ին և ունեցել է ռուսական ու համաշխարհային գիտություն փառքը դարձած նշանավոր գիտնականներ, ինչպիսին էր քիմիական էլեմենտների աղյուսակի հեղինակ Դմիտրի Մենդելեևը:

Ադոնցը միաժամանակ սովորել ու ավարտել է Ս. Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և պատմաբանասիրական ֆակուլտետները՝ ստանալով գերազանցության ոսկե վկայականը: Այդ նույն համալսարանում պաշտպանել է մագիստրոսական թեզ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908 թ.), իսկ 1915 թվականին ստացել է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» հետազոտության համար: Երկու աշխատություններն էլ եզակի են իրենց նշանակությամբ ու հարստացնում են միջազգային բյուզանդագիտությունն ու հայագիտությունը: 1909-ից Ադոնցը դասավանդել է Ս. Պետերբուրգի համալսարանում՝ սկզբում որպես դոցենտ, իսկ 1916-ից որպես պրոֆեսոր:

1920-ին Ադոնցը գլխավորել է Ռուսաստանի կառավարության արտասահման մեկնելու թույլտվություն ստանալու համար, սակայն չսպասելով պատասխանի՝ հեռացել է Ռուսաստանից, այլևս չվերադառնալու հաստատ որոշմամբ: Մինչև 1931 թ. ապրել է Փարիզում, իսկ 1931-ից, երբ հատուկ նրա համար բացվել է Բյուսեղի համալսարանի հայագիտական ամբիոնը, տեղափոխվել է Բյուսեղ, դարձել այդ համալսարանի փառապանծ անուններից մեկը և այնտեղ էլ 1942 թ. հունվարի 27-ին կնքել մահկանացուն: Նա ամուսնացած էր գեղեցիկ ու տաղանդավոր, շատ երիտասարդ օպերային երգչուհի ու նկարչուհի Հուրի Հովնաթանյանի հետ, որին անսահման սիրում էր: Ցավոք, այդ գեղեցիկ կինը վախճանվել է 1935-ին՝ երկու տարվա ծանր հիվանդությունից հետո: Թաղված է Փարիզում: Ամեն տարի Ջատկի տոնին Ադոնցը գնացել է ու ծաղիկներ դրել պաշտելի կնոջ գերեզմանին:

Ադոնցի համար 1920-ին Ռուսաստանից և դրա կազմի մեջ մտնող հայրենի Հայաստանից հեռանալը եղել է ողբերգականորեն ծանր, որովհետև նրա գիտական ողջ ստեղծագործությունը նվիրված էր իր երկրի կյանքի պատմությունը աշխարհին ծանոթացնելու նվիրական գործին:

Ադոնցի հուղիվածները

<sup>1</sup> Մ. Ի չ խ ա ն. Երեք մեծ հայեր, Բեյրութ, 1952, էջ 12:

Ադոնցը Հիանալի գիտեր Հայաստանը, նրա պատմությունը, մշակույթը, միջազգային այն նպաստը, որ հայերը բերել էին մարդկության պատմության մեջ: Նա ոտքով ու ձեռքով շրջել էր թե Արևելահայաստանում, թե Արևմտահայաստանում, մասնակցել էր Ն. Մառի գլխավորությամբ ընթացող հայ Բագրատունիների «տիեզերահռչակ» Անի մայրաքաղաքի պեղումներին, 1916–1917 թթ. ակտիվորեն մասնակցել Վանի, Մուշի, Էրզրումի հնագիտական արշավանքներին: Նրա գիտական ու հնագիտական ուսումնասիրություններն իրենց հանրազումարային արդյունքն արտահայտեցին վերջին կոթողային աշխատության մեջ, որը լույս տեսավ հետմահու 1946-ին Փարիզում և հայազետի երազած հայոց պատմությունը ներկայացնող 4 հատորից բաղկացած լինելու հեռանկարով ստեղծված աշխատության առաջին հատորն էր միայն: Այն կոչվում է «Քննական պատմություն Հայոց», ու այդ հատորի համար փայլուն առաջաբան է գրել Ֆրանսիայի ակադեմիայի անդամ Ռենե Գրուսեն:

Թեև Ադոնցն այլևս չկարողացավ գալ Հայաստան, նա իրենով ներկայացրեց Հայաստանը՝ իր անձով ու իր գործով: Մուշեղ Իշխանը գրում է. «Հայաստանը կարծես Ն. Ադոնցն էր, նրա լավագույն հատկանիշների մարմնացումը, նրա մարդկային պատկերը: Նա հայ տղամարդ էր, բառի ավանդական, արդիական և ազնվական իմաստով»<sup>2</sup>:

Ն. Ադոնցի երկերի 8 հատորները հրատարակել է Երևանի պետական համալսարանը՝ Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության Հայկական բաժանմունքի հովանավորությամբ: Այդ հատորները նվիրվածով հրատարակության է պատրաստել պատմաբան, Ադոնցի երկերի լավագույն գիտակ Պետրոս Հովհաննիսյանը: Հիանալի է, որ հատորներում ուսերենից, ֆրանսերենից, անգլերենից թարգմանված ներկայացված են Ադոնցի տպագրված գործերը, ինչպես նաև նամակները:

Ադոնցը չի թողել ինքնակենսագրական հուշեր. դրանք կլինեին բացառիկ հետաքրքիր, որովհետև նրա կյանքը եղել է զարմանահրաշ: Սակայն 1937 թ. Բյուզանդում գրել է «Դավիթ Բեկ և Տեր Ավետիքի սերունդը» ինքնակենսագրական տվյալներ պարունակող հոդվածը, որը տպագրվել է նույն 1937-ին Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» ամսագրում<sup>3</sup>: Այս հոդվածում ուշագրավ փաստեր կան նրա մեծ պապի՝ Տեր Ավետիքի մասին, որը եղել է Դավիթ Բեկի զինակիցներից մեկը: Ահա թե ինչ է գրում նրա մասին Ղուկաս Սեբաստացին. «Այլև տեր-Ավետիսը նույն Հայրիծորում էր 468 հոգով. այս տեր-Ավետիսը բազում մեծ սխրանքներ գործեց, ինչպես Պատմության մեջ է երևում. շատ քաջ էր ու արիասիրտ և՛ խոսքով հույժ գորավոր, և՛ գործով, և սրա համար, երբ նա հեռանալով հայրենի երկրից պանդխտեց Երուսաղեմում, շատերը նրա հայրենի գավառից հորդորում էին վերադառնալ իրենց մոտ և պաշտպան կանգնել երկրին: Բայց նա հրաժարվում էր՝ քահանայական կարգի պատվին»<sup>4</sup>: Այս հոդվածում կա մի հետաքրքիր փաստ. այն կապվում է հայ միջնադարի նշանավոր դեմքերից մեկի՝ Գրիգոր Տաթևացու գերեզմա-

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 17:

<sup>3</sup> Տե՛ս Ն. Ադոնց. Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 547–555:

<sup>4</sup> Ղ. Սեբաստացի. Դավիթ Բեկի պատմությունը, Երևան, 1988, էջ 42:

նի վրա կառուցված չատ չքեղ դամբարանի հետ: Պարզվում է, որ 1787 թ. կառուցված այդ դամբարանի նյութական ծախսերը հոգացել են մի քանի բռնակոթիկներ, որոնցից մեկը եղել է Ադոնցի տոհմի նախահայրը՝ Ադդէն, որի անունով էլ նրանց տոհմը կոչվել է Ադոնց<sup>5</sup>:

Ադոնցի գիտական ժառանգությունը բազմաբնույթ է ու բազմալեզու: Դրանք պատմագիտական, բանասիրական, արվեստագիտական, լեզվաբանական աշխատություններ են, որոնց հիմնական առանցքը բյուզանդագիտությունն ու հայագիտությունն են:

1904 թ. գիտնականը զեկուցում է կարդում Ս. Պետերբուրգի համալսարանի գիտական նստաշրջանում: Թեման էր՝ «Մարգարան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ»: Սա բոլորովին նոր հայացք ու փորձ էր՝ ուղղված Ավարայրի հերոսամարտի դեպքերին: 451 թ. տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտը հայություն համար դարձավ հավերժական հիշեցում. որքան էլ թշնամին հզոր և ուժեղ լինի, հոգ հայրենին օտարին տալը դավաճանություն է: Ավարայրի դեպքերը մանրամասն պատկերել են երկու պատմիչներ՝ Եղիշեն և Ղազար Փարպեցին, որոնք իրենց երկերը գրել են Մամիկոնյանների պատվերով: Երկու պատմիչներն էլ Վասակին համարում են դավաճան: Եղիշեն առավել ատելություն է ներկայացնում Վասակին՝ փորձելով նրա կերպարով կանխել եկող դարերում լինելիք դավաճանությունները. «Գրեցալ յիշատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն յանդիմանութեան մեղաց նորա. զի ամենայն, որ զայս լուեալ գիտասցէ, նզովս ի հետ արկցէ, և մի՛ լիցի ցանկացող գործոց նորա»<sup>6</sup>: Եղիշեի այս որակումը կրկնվել է դարերի ընթացքում: 1784 թ. Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Միքայել Չամչյանցը իր «Պատմութիւն Հայոց» երկի երկրորդ հատորում ունի ԺԲ գլուխ հետևյալ խորագրով՝ «Յաղագս բազմապատիկ նենգություն և չարություն Վասակայ և ունելոյ նորա զսուրբ Յովսէփ և զՂեւոնդ և քաջութեանց հայոց ընդդէմ պարսից»<sup>7</sup>:

Այդ ավանդույթը կրկնվում է նաև XX դարի հայ գրողների երկերում: Այսպես էր մեկնաբանված Վասակի կերպարը մինչև Ադոնցի հոգվածը: Ըստ Ադոնցի՝ Վասակն ունեցել է բոլորովին ուրիշ քաղաքական ծրագիր, որը և հանգեցրել է դավաճանության: Գիտնականը հիշեցնում է Վասակ Սյունեցուն տրված Կորյուն վարդապետի գնահատականը. «Յորում ժամանակի պարզեւեալ յԱստծոյ, հասանէր ի գլուխ իշխանութեանն Սիւնեաց քաջն Սիսականն Վասակ, այր խորհրդական և հանճարեղ և յառաջիմաց, շնորհատուր իմաստութեամբն Աստուծոյ: Բազում ինչ նպաստութիւն ցուցանէր աւետարանագործ վարդապետութեանն, իբրեւ որդոյ առ հայր՝ հպատակութիւն ցուցեալ և ծառայեալ ըստ աւետարանին վայելչութեան, մինչ ի վախճան զհրամայեալսն ի գործ բերէր»<sup>8</sup>:

Ադոնցը շեշտում է, որ Վասակը սկզբում Վարդանի հետ էր, և հենց նրա մատանիով կնքված խնդրագրեր են ուղարկվում Բյուզանդիայի Թեոդոս կայսերը, Անտիոքի ստրատեգոս Անատոլիոսին, Հայաստանի հարավային

<sup>5</sup> Ն. Ա. Դ. Դ. Երկեր, հ. Ա, էջ 551:

<sup>6</sup> Եղիշե. Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 282:

<sup>7</sup> Մ. Չամչյանց. Պատմութիւն Հայոց, հ. II, Երևան, 1984, էջ 77:

<sup>8</sup> Կ. Բ. Ե. Վարդ Մաշտոցի, Երևան, 2005, էջ 64:

նահանգները՝ Աղձնիք, Անգեղտուն և Ծովք, Իբերիա ու Աղվանք: Անգամ բանակցությունների մեջ են մտնում հոների թագավոր Հեռանի և ուրիշ լեռնականների հետ<sup>9</sup>: Սակայն ոչ մի տեղից օգնություն չի գալիս. «Այդպիսի պայմաններում խզել կապերը պարսիկների հետ և նրանց բացահայտ պատերազմ հայտարարել, նշանակում էր երկիրը տանել դեպի անխուսափելի կործանում»<sup>10</sup>: Արտաշատի ժողովին մասնակցում էին 18 նախարարներ: Նրանցից Վարդանի կողմն անցան 8-ը, իսկ 10-ը հրաժարվեցին ապստամբությանը մասնակցելուց և անցան Վասակի կողմը. «Ակնհայտ է, դրանում չի կարելի տեսնել ուխտադրություն, այլ սոսկ հարցի վերաձևում»<sup>11</sup>: Ըստ Ղազար Փարպեցու՝ Հագկերտ Երկրորդն իր մոտ, որպես պատանդներ, պահել էր Վասակի երկու որդիներին, իսկ Եղիշեն այդ մասին լուր էր տալիս<sup>12</sup>:

Ադոնցը նշում է նաև Վասակի փեսայի՝ Վարդգիսի և Վարդգիսի դավաճանությունը, նրա դավաճանի լինելը, Վասակի ցմահ բանտարկությունից հետո Սյունյաց տանուտեր նշանակվելը: Այս փաստերը ևս չկան Եղիշեի մոտ: Պատմաբանի կարծիքով՝ Ավարայրի ապստամբության հետ կապված դեպքերն առավել անկողմնակալ պատկերել է Փարպեցին: Ըստ վերջինիս՝ Վասակը մինչև կյանքի վերջը մնում է քրիստոնյա և զոջում է իր վարքագծի համար:

Փորձելով արդարացնել Վասակ Սյունեցու վարքագիծը՝ Ադոնցը երբեք չի նսեմացնում Վարդան Մամիկոնյանին և նրա գլխավորած ազգային-ազատագրական պայքարը:

«Հին հայոց աշխարհայացքը» հոդվածը Ադոնցը գրել է Փարիզում: Սկսելով նախնադարյան հայերի տոտեմների ու ֆետիշների ընկալումներից՝ նա անցում է կատարում հեթանոս հայերի աստվածներին՝ չընդունելով Գրիգոր Խալաթյանցի՝ Խորենացուն ուղղված խիստ քննադատական մոտեցումները. «Կարծում ենք, որ Խալաթյանցի կասկածները տապալվում են: Արա Գեղեցիկի և Շամիրամի պատմությունը գրական հերյուրանք է, այլ զուտ ժողովրդական գրույց: Որ Շամիրամի շուրջը շատ ավանդություններ և առասպելներ են եղել, այդ երևում է Պատմահոր հակիրճ ակնարկներից»<sup>13</sup>: Յուրովի քննելով հեթանոս հայ աստվածների հետ կապված ծեսերն ու հավատալիքները՝ պատմաբանը եզրահանգում է, թե քրիստոնեական ծեսերն ու տոներն էլ գալիս են հեթանոսական ժամանակներից<sup>14</sup>:

Հայագետն առանձին հոդված է նվիրել հայ հին վեպի հետաքրքիր դեմքերից մեկին՝ Տորքին, որի անվան և կատարած դերի շուրջ ներկայացնում է տարբեր գիտնականների կարծիքներ՝ կրկնելով, իհարկե, Պատմահոր «Հայոց պատմություն» մեջ եղած առասպելը: Սակայն Տորքի աստվածության վերաբերյալ չի հայտնում սեփական եզրահանգումը<sup>15</sup>:

<sup>9</sup> Ն. Ա. դ. ո. ն. ց. Երկեր, հ. Ա, էջ 182:

<sup>10</sup> Նույն տեղում:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 185:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 24:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 79–85:

1907-ին է գրված «Հայ հին շինականությունը» հոդվածը՝ տպագրված Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: Սա բանավիճային հոդված է և ուղղված երևանի պետական համալսարանի պրոֆեսոր Հակոբ Մանանդյանի «Դիտողություններ հին Հայաստանի շինականների դրույթյան մասին» հոդվածին: Մանանդյանն իր հոդվածում այն միտքն էր զարգացնում, թե Արշակունյաց Հայաստանում և նրանից հետո Հայաստանում եղել է համայնական հողատիրություն: 43 էջից բաղկացած այս ծավալուն հոդվածի հենց սկզբից Ադոնցը բացահայտում է խնդրի մեկնաբանման նման մոտեցման նկատմամբ ունեցած իր կտրուկ անհամաձայնությունը. «Սակայն իրավամբ կարելի է խորհել այս նորությունից: Հայաստանի երկու խոշոր հարևան պետությունները՝ իրանական արևելքը և բյուզանդական արևմուտքը, որոնց ազդեցություն տակ կերտված է Հայ կյանքը, ծանոթ չեն բնավ համայնական հողատիրության»<sup>16</sup>: Ընդդիմախոսը հոդվածում տարբեր ենթավերնագրերով, քաջատեղյակ ձևով ներկայացնում է ֆեոդալիզմի դարաշրջանի Հայ տնտեսական կյանքի կառուցվածքը, ֆեոդալների և իշխանների սեփականատիրական իրավունքները և շինականության կացությունը: Դրանք բնավ համահունչ չեն Մանանդյանի հոդվածում առաջադրված դրույթներին:

Տիգրան Մեծը Ադոնցի ամենասիրելի դեմքն է Հայ ժողովրդի պատմության ողջ ընթացքում: Նրա դերին է նվիրված «Միհրդատ Եվպատոր և Տիգրան Մեծ» հոդվածը: Միհրդատ Եվպատորը (111–63 մ. թ. ա.) Պոնտոսի թագավորն էր, որն իր ողջ գահակալության ընթացքում պատերազմել է Հռոմի դեմ: Նա շատ ընդունակ անձնավորություն էր, գիտեր բազմաթիվ լեզուներ, խոսում էր բոլոր այն երկրների լեզուներով, որոնք մտած էին իր կայսրության մեջ: Նրա պետության մեջ էին մտնում Բոսֆորի ու Դարդանելի նեղուցները: Միհրդատն իր աղջկան ամուսնացրել էր Տիգրան Մեծի հետ: Միհրդատը հեղինակյալ մշակույթի նվիրյալ հետևորդ էր: Հայտնի է, որ վերջնականապես պարտվելով Հռոմին, նա թույլ է խմել ինքնասպան լինելու նպատակով, սակայն երբ թույլը չի ներգործել, խնդրել է իր զինվորներից մեկին՝ սպանել իրեն<sup>17</sup>:

Միհրդատ Պոնտացու կյանքի այս համառոտ նկարագիրը կա աշխարհի բազում հանրագիտարաններում: Տիգրան Մեծի մասին նույնպես կա մի շարք հանրագիտարաններում<sup>18</sup>:

Ադոնցը նախ խոսում է Միհրդատ Եվպատորի կամ Պոնտացու նվաճողական արշավանքների մասին: Միհրդատը բանակցություններ է վարում Հայաստանի թագավոր Տիգրան Մեծի (95–55 մ. թ. ա.) հետ՝ Հռոմի դեմ միացյալ ուժերով պայքարելու համար: Հայագետը գրում է. «Կարևորն այն է, որ Միհրդատի և Տիգրանի քաղաքական մերձեցումը պատճառ հանդիսացավ, որպեսզի երկու խոշորագույն տերությունները՝ Հռոմն ու Պարթևաստանը, անհրաժեշտ համարեին պայմանավորվել Հայաստանի և Պոնտոսի տարածքային հետագա ծավալումը կասեցնելու համար: Այսպիսով, դա հիմք դրեց մի քաղաքականության, որը պետք է դարերի խորքից գոյատևեր

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 97:

<sup>17</sup> Տե՛ս «Petit Robert – 2». Paris, 1988, p. 1221.

<sup>18</sup> Տե՛ս «Nouveau petit Larousse illustré». Paris, 1932, p. 1711.

մինչև նոր օրերը, դառնար պարտավորեցնող մի դեղատոմս բոլոր ժամանակների քաղաքագետների համար»<sup>19</sup>:

Ազոնցը փաստացի հաստատում է, որ Տիգրանն իրեն զրուսեորել է որպես աշխարհակալ ու լուսավորիչ, և նրա գործունեությունը նոր մեկնաբանման կարիք ունի: Պատմական ճշմարտությունը կեղծվել է հօգուտ Հռոմի փառքի: Տիգրանի կերպարը նսեմացրել են՝ ելնելով հռոմեական հայրենասիրությունից: Հին պատմիչները զարմանալիորեն աղճատել են Տիգրան Մեծի կերպարը. «Տիգրան Մեծն իր արժանավայել տեղը պետք է զբաղեցնի Արևելքում երբևէ իշխած տիրակալների շարքում: Նա արժանացել է «Մեծ» տիտղոսին՝ պատվավոր մի կոչման, որը պատմությունը հազվադեպ է շնորհում իր ընտրյալ դերակատարներին»<sup>20</sup>:

Ծավալուն հետազոտություն է «Մամիկոնյան իշխանուհին, բյուզանդական գահի վրա» խորագիրը կրողը: Հոդվածը տպագրվել է 1930-ին և պատասխան է իր ուսուցչի՝ Կարլ Կրումբախների 1897 թ. տպագրած մի վիճահարույց հոդվածի:

Թեոփիլոս բյուզանդական կայսեր (829–842) գահակալության տարիներին արաբական խալիֆայի վտանգավոր թշնամի էր բյուզանդական կայսրության համար: Սակայն արաբական խալիֆայի մեջ կային ներքին հակամարտություններ: Իսպանիայի արաբ ամիրան ռիսերիմ թշնամի էր Բաղդադում նստող Աբբասյան տոհմին: Թեոփիլոս կայսերը հայտնի էր այդ հակամարտությունը, և նա դեսպանական այցելությունների միջոցով, դիվանագիտորեն փորձում էր օգուտ քաղել այդ հակամարտությունից: 839-ի վերջերին, ի պատասխան Թեոփիլոսի Իսպանիա ուղարկած պատվիրակության, ամիրան պատասխան բարեկամական պատվիրակություն է ուղարկում Կոստանդնուպոլիս: Արաբների պատվիրակությունը ղեկավարում էր յոթանասունամյա, սակայն երիտասարդական տեսք ունեցող մի կորովի պալատական՝ Յահյա-ալ-Ղազզալ անունով: Կայսրը համակրանքով է լցվում արաբ պատվիրակի նկատմամբ և հյուրին հրավիրում է մասնակցել արքայական ճաշկերույթին: Արաբ պատվիրակը նստած էր կայսեր մոտ, երբ հանկարծ սենյակ է մտնում թագուհին, որի չնաշխարհիկ գեղեցկությունը ապշեցնում է հյուրին: Վերջինս կայսերը հավատացնում է, թե երբևէ նման գեղեցկություն չի տեսել: Ազոնցն այս փաստը քաղել է արաբ պատմիչից: Կայսրուհին հայուհի էր՝ Մամիկոնյան նախարարական տնից, ու նրա անունն էր Թեոդորա: Այնուհետև, ըստ բյուզանդական պատմիչի, ներկայացնում է, որ Թեոփիլոսը կայսրության գեղեցկուհիների մեջ ընտրել է Թեոդորային՝ նրան տալով ոսկե խնձորը:

Ազոնցը պատկերում է Մամիկոնյան նախարարական տան զավակների մեծագործություններն ու ռազմական հաջողությունները Բյուզանդական կայսրության մեջ: Ըստ Ազոնցի՝ VIII դարի երկրորդ կեսին բյուզանդական կայսերական բանակն արդեն հայերի ձեռքում էր: Արտավազդը՝ սպարապետ Անատոլիկյան գնդի, Տաճատը՝ սպարապետ Բուկելլերյան գնդի, Վարազտի-րոցը՝ սպարապետ Արմենիակյան գնդի, Գրիգորը՝ Մուշեղակի որդին, սպարա-

<sup>19</sup> Ն. Ա. Դ. ու Յ. Երկեր, հ. Ա, էջ 159:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 164:

պետն էր Օփսիկյան գնդի: Բյուզանդիայի հինգ գլխավոր զորավարներից չորսը հայեր էին<sup>21</sup>:

Թեոփիլոսն ու Թեոդորան որդի են ունենում, որը հազիվ երեք տարեկան էր, երբ կայսրը վախճանվում է, և իշխանությունն անցնում է Թեոդորային ու նրա անչափահաս որդուն: Աղոնցը խոսել է Թեոդորայի պատմական կշռի մասին. «Կանացի արտակարգ հմայքը, կնոջ այդ տիրական զենքը, մնաց ընտանեկան սրբության շրջանում և հրապարակ չհանվեց փառասիրական և քաղաքական նպատակների սպասարկության համար: Թեոդորան առաքինի էր և այն ժողովրդական մեծ համարումը, որ վայելում էր, պարտական էր իր մաքրություն: Թեոփիլոսը, որ ի բնե հակում ուներ զեխության և շվայտություն, սեղմվեց վայելչության սահմանների մեջ շնորհիվ իր ամուսնու սրբակեցության»<sup>22</sup>:

Գիտնականը փաստերով է խոսում Թեոդորա թագուհու խնայող լինելու հատկանիշի մասին, որի հետևանքով բյուզանդական պետության ֆինանսական վիճակը դառնում է նախանձելի: Աղոնցն առանձին հոդվածով պատմում է Թեոդորա թագուհու եղբոր՝ Վարդ Մամիկոնյանի (856–866) մասին: Վարդը Թեոդորայի որդու խնամակալն էր և առաջին դեմքն էր պալատում՝ Միքայելի կայսրության ժամանակ:

Բարձր գնահատելով Աստվածաշնչի Հին Կտակարանի պատմական և ճանաչողական արժեքը՝ Աղոնցը նկատում է, որ IX դարում բյուզանդական գիտական միտքը սկսում է որոնումներ կատարել և դեմքով չըջվում է դեպի անտիկ ժամանակները: Վարդը, լինելով ուսյալ և առաջադեմ հայացքների տեր մարդ, իր խնամքի տակ է վերցնում Լևոն քաջ փիլիսոփային, որն ազդեցությամբ հայ էր: Գիտությունն ու կրթությունը զարկ տալու նպատակով Վարդ Մամիկոնյանը Մագնավրա պալատում բացել տվեց Բյուզանդիայի առաջին համալսարանը՝ նրա ղեկավարումը հանձնելով Լևոն Փիլիսոփային: Աղոնցը մանրամասն պատմում է այն պալատական խարդավանքները, որոնք հյուսվում էին Վարդի դեմ և հանգեցրին նրա սպանությանը: Այդ ամենը կազմակերպում էր Վասիլը, որը հայ էր: Վասիլը սպանում է ոչ միայն Վարդին, այլև նրա քրոջ որդուն՝ Միքայելին ու գրավում գահը: Գիտնականը շատ բարձր է գնահատում Վարդի գործունեությունը, որի շնորհիվ Բյուզանդիայում հաստատվեց ժողովրդական լուսավորություն, ու բյուզանդական եկեղեցին կատարյալ ձևով ազատվեց Հռոմի եկեղեցու ազդեցությունից<sup>23</sup>:

Բյուզանդագետն առանձին ծավալուն հոդված է նվիրել Վասիլ Հայկազունին (867–886), որին անվանում է մեծագործ կայսր: Փոտ պատրիարքի ջանքերով Վասիլի համար հնարեցին մի ծննդաբանություն, ըստ որի Վասիլը սերում է Հայոց Տրդատ Երրորդ արքայի տոհմից՝ այն արքայի, որի ջանքերով քրիստոնեությունը Հայաստանում հաստատվեց որպես պետական կրոն: Աղոնցը փաստերով հիմնավորում է, որ Վասիլի հայրը և մայրը հայեր էին<sup>24</sup>, և նա սերում էր Մամիկոնյան տոհմից ու վերջինիս գահ բարձրանալով

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 354:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 397:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 430–431:



Բյուզանդիայի գահն անցավ հայկական ծագումով Մակեդոնական դինաստիայի ձեռքը (867–1056): Վասիլ Առաջինի օրերին և ընդհանրապես Մակեդոնական դինաստիայի իշխանության ժամանակ Բյուզանդիան դարձավ աշխարհի ամենաուժեղ և զարգացած պետությունը<sup>25</sup>: Այդ դինաստիայի հզորության մասին գրված է վերջին տարիներին լույս տեսած «Լև Գումիլյով: Հանրագիտարան» սովոր հատորում. «Մակեդոնյան դինաստիայի դերը Բյուզանդիայի էթնոգենեզում եղել է նշանակալի: Նա վերականգնել է Բյուզանդիայի սահմանները մինչև Եփրատ ու Դանուբ, բարձրացրել տնտեսությունը և Կոստանդնուպոլսի մշակույթն ու նրա փառքը տարածել ողջ աշխարհի վրա»<sup>26</sup>:

Նիստ ուշագրավ հետազոտություն է Ադոնցի «Բագրատունյաց փառքը» խորագիրը կրողը, որը ներկայացնում է Բագրատունիների հայկական թագավորական տան շառավիղները Վրաստանում, Աղվանքում, Արցախում:

Անգլիացի հայագետ Չառլզ Դաուսեթը իր «Սայաթ-Նովա, XVIII դարի տրուբադուր (աշուղ)» գրքում գրված 1997-ին, նկատում է, թե Վրաստանի արքա Հերակլ Երկրորդը հատուկ ջերմ վերաբերմունք ուներ հայ Սայաթ-Նովայի նկատմամբ, որովհետև գիտեր, որ իր թագավորական ընտանիքը սերում է հայ Բագրատունիներից: Միաժամանակ նշում է, թե Բագրատունի թագավորական գերդաստանն աշխարհում եղակի է իր երկարակեցությամբ<sup>27</sup>: Մինչև Դաուսեթը՝ Բագրատունիների երկարակեցության և այդ առումով եզակիության փաստարկը տեսնում ենք Ադոնցի մոտ. «Հազվագյուտ են պատմության մեջ այնպիսի իշխանական տները, որպիսիք են Բագրատունիք. հազվագյուտ Արևելքում, թե Արևմուտքում: Տոհմ է բազմադարյան, աշխարհաշեն և աշխարհակալ և փայլեց իր հանճարով հատկապես արաբական շրջանում»<sup>28</sup>: Ադոնցի ծավալուն հետազոտությունը փաստացի ապացուցում է, թե ինչպես IX դարում Բագրատունիները հավասարապես թագավորում էին Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում:

«Հայացած Աստվածաշունչը և նրա պատմական տարողությունը» հոդվածը Փրանսերենով Ադոնցը կարդացել է 1936-ի մարտի 29-ին Սորբոնի համալսարանի հանդիսությունների մեծ դահլիճում, որին ներկա են եղել տարբեր ազգերի բյուզանդագետներ և հայագետներ: Զեկուցման մեջ ներկայացվում են այն մտավոր, մշակութային, քաղաքական նվաճումները, որոնց հայերը հասել են չնորհիվ Աստվածաշնչի հայերեն թարգմանության: Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի ջանքերով իրականացված Աստվածաշնչի թարգմանությունը հայերին տեղափոխեց լուսավորյալ ազգերի առաջին շարքերը: Իր ողջ ստեղծագործության մեջ բացառիկ տեղ հատկացնելով Հայաստանի կյանքում եկեղեցու ունեցած դերին՝ Ադոնցը գրում է. «Ազգային եկեղեցի ունենալ նշանակում է ունենալ սեփական մշակույթ, ինքնահատուկ

<sup>25</sup> “Petit Robert – 2”, p. 181.

<sup>26</sup> Л. Г у м и л е в. Энциклопедия. М., 2017, с. 173.

<sup>27</sup> Ch. D o w s e t t. Sayat-Nova, An 18<sup>th</sup> – century troubadour. Lovanii, 1997, p. 450.

<sup>28</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Ա, էջ 439:

լեզու, գրականություն, արվեստ, մեկ խոսքով՝ ամեն ինչ, որ բնորոշում է ազգի հոգևոր կյանքը»<sup>29</sup>:

Այս հոգվածում Ադոնցը վերադառնում խոստում է հայ նախարարներին՝ Բյուզանդիայում ունեցած վճռորոշ դերի մասին և բերում է օտարազգի բյուզանդագետների կարծիքներ, որոնք հաստատում են վերոհիշյալ ճշմարտությունը: Ֆրանսիացի պատմաբան և բյուզանդագետ Ալֆրեդ Ռամբոն վկայում է, թե X դարում հայերը դարձել էին Բյուզանդական կայսրության տերերը. պետական կարևոր պաշտոններում ամենուր հայեր էին: Բյուզանդական եկեղեցու փառքը հանդիսացող Փոտ պատրիարքը մոր կողմից հայ էր: Բյուզանդագիտության մեջ անվերապահ հեղինակություն ունեցող նույն գիտնականն ասում է. «Առանց հայ գորավարների Բյուզանդիան պիտի կործանվեր բարբարոսների հարվածների տակ: Ծանր ըոպեններին հանկարծ երևան էր գալիս մի Հերակլ, մի Վասիլ, մի Չմշկիկ, մի Փոկաս, որ այդ հոգնած քաղաքակրթությանը նոր թարմություն էր տալիս, և այնժամ կայսրությունը՝ այդ ծեր կինը, դառնում էր ինչպես մանկամարդ աղջիկ՝ ոսկով ու թանկագին քարերով զարդարված»<sup>30</sup>:

Ադոնցի «Հայ մշակույթի սկզբնավորությունը» հոդվածը նվիրված է Մաշտոցի ստեղծած գրերից հետո հայ մշակույթի զարգացման առաջին շրջանին: «Մշակույթն իր բարձր իմաստով սկսվում է իրապես գրի և գրականության շրջանից», – հավաստում է հայագետը<sup>31</sup>: Ըստ նրա՝ հայ գրերի ստեղծման հանգամանքները ավելի հայտնի են, քան այլ ժողովուրդներինը: Այդ խնդրում անփոխարինելի դեր է կատարել Կորյունի «Վարք Մաշտոցի» աշխատությունը: Սակայն այդ աշխատության մեջ կան փաստեր, որոնք հարկավոր է ստուգել: Հատկապես անհրաժեշտ է ստուգել և ճշտել թվականները: Ահա հենց այդ խնդիրներին էլ նվիրված է Ադոնցի հոդվածը:

Հայագետը քաջ տիրապետում էր հայ միջնադարի մեծերի երկերի բնագրերին ու փորձում էր մեկնաբանել դրանցում եղած անհասկանալի մտքերն ու գիտական առումով նոր լույս սփռել դրանց վրա: Նրա սիրելի պատմիչներից էր Փավստոս Բուզանդը, որի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել է երկար տարիներ՝ սկսած դեռևս Եվրոպայում ուսանելու ժամանակներից: Ադոնցի կարծիքով Բուզանդը չի օգտվել վավերագրերից, նա հետևել է կենդանի հիշողություններին և ավանդություններին. «Փավստոսի գլխավոր առավելությունը մյուս պատմիչների համեմատությամբ՝ երկրի իրական կյանքը մոտիկից ճանաչելու մեջ է»<sup>32</sup>: Հայաստանի պատմության մեջ 298–363 թվականների արանքում եղած իրադարձությունների ճշգրիտ պատկերը վերականգնելու համար Փավստոսի երկն ունի եզակի արժեք: Հույն պատմագիրներից բերված ընդարձակ մեջբերումներով հայագետն առավել հաստատում է Փավստոսի երկի պատմական ու ճանաչողական արժեքը: Հատկապես համապատասխան զուգահեռներ են տարվում IV դարի լատին պատմիչ Ամմիանոս Մարկելլինոսի հայ թագավորների՝ Տիրանի, Արշակ Երկրորդի, Պապ թագավորի մասին պատմությունների հետ:

<sup>29</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Բ, Երևան, 2006, էջ 45:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 35:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 87:



տուլթյունից ու իր անցյալին վայել տեղ բռներ լուսավոր երկրների շարքում. «Շահնամեն, լայն ըմբռնումով, ոչ այնքան անհատական ներշնչման և կամ անհատական նախաձեռնություն արդյունք էր, որքան ծնունդ մոտալուտ ազատության երազներով խանդավառված հանրային գիտակցության: Եվ միանգամայն գաղափարական աստղձ էր նոր կանգների պետական շենքի»<sup>36</sup>: Ըստ Ադոնցի՝ Ֆիրդուսու տոնը մոտ է հայերի սրտին, որովհետև նրանում կա քաղաքակրթության ու ազգի լուսավորության փառաբանումը, իրողություն, որի համար հայերն այնքան արյուն են թափել և դրա համար էլ դարեր շարունակ հալածվել են խավարամիտ բռնությունից: Հայերն իրենց դեմքը դարձրել են դեպի լուսավոր Արևմուտքը, որպեսզի փարատեն Արևելքի ոճրագործ խավարը<sup>37</sup>:

Ադոնցը «Դավիթ Բեկի պատմական հիմը և գաղափարական արժեքը» ծավալուն հոդվածում քննական մոտեցում է ցուցաբերում Բաֆֆու «Դավիթ Բեկ» վեպի պատմական դեպքերի նկարագրության նկատմամբ: Հոդվածում նա տեղադրել է Դավիթ Բեկի ազատագրական կռիվների քարտեզը, որը սկսվում է Շուշիից ու ավարտվում Նախիջևանով: Պատմաբանը ճշգրտում է վեպում պատկերված որոշ իրադարձությունների պատմական փաստերը, նշում պատմական որոշ անձների կատարած դերի փոփոխությունները: Ըստ երևույթին Ադոնցը ծանոթ է Վ. Բելինսկու պատմավեպի տեսությանը, երբ գրում է. «Գործող անձի կարող են լինել շինծու, անծանոթ պատմությանը, բայց եթե նրանց նկարագիրը, նրանց ոգին, աշխարհայացքը համապատասխան են ընտրած պատմական միջավայրին, կլինեն պատմական»<sup>38</sup>:

Իրավացի է Ադոնցը, երբ ասում է, թե Բաֆֆին Դավիթ Բեկին անդրադարձել է իր ժամանակի խնդիրներից ելնելով: Վեպը նրա համար եղել է քաղաքական կրթության մի դասարան<sup>39</sup>: «Դավիթ Բեկ» վեպով Բաֆֆին կամեցել է ժամանակակիցներին սովորեցնել, թե ինչպես կարելի է թոթափել օտարի լուծը:

Հայագետը հոդվածը գրել է Բրյուսելում 1937-ին: Հոդվածի ավարտի հատվածն ուղղված է հանուր հայությանը բոլոր եկող ժամանակներում: Այն իմաստուն պատվիրան է, որը ոչ միայն պետք է հիշի սովորական հայը, այլ հատկապես այն հայերը, որոնք ստանում են մի ամբողջ ազգ առաջնորդելու ու ղեկավարելու առաքելությունը: Տեղին է Ադոնցի պատգամը մեջբերել նույնությամբ. «Մենք կռվազան չենք և զենք էլ չունենք կռվելու: Բայց սովորենք գոնե զինավարժություն, ծանոթանանք ժամանակակից ահավոր զենքերին, զինվորագրվենք և ոչ թե խուսափենք օտար շարքերում: Օգտվենք պատեհությունից, խոհուն ճակատով և համր բերանով: Ոչ ոք չգիտե, անցքերի թավազոր անիվը ո՞ւր է տանում: Պատրաստ և զգաստ լինենք, որպեսզի չկորչենք անփառունակ, կռվողների ոտքերի տակ կոխան» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>40</sup>:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 490:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 494:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 522:

<sup>39</sup> Նույն տեղում:

<sup>40</sup> Նույն տեղում, էջ 529:

Ազոնցն անդրադարձներ ունի նաև նոր շրջանի հայ և օտար գրականություններին: Աբովյանի անհայտանալու բացատրության մի նոր փորձ է կատարել Ակսել Բակունցը «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայում» հոդվածով, որը և քննարկում է հայագետը: Աբովյանի անհայտ բացակայումը Բակունցը կապել է 1848-ին Ֆրանսիայում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխության հետ: Իբր այդ ընդվզման ձայնը հրապուրել է Աբովյանին, ու նա թողել է տուն, տեղ ու Տաճկաստանով գնացել Եվրոպա: Նա չի ընդունում գրականագիտության մեջ եղած Աբովյանի անհայտ բացակայման բոլոր վարկածները, ինչպես նաև Բակունցին: Այդ հոդվածում Ազոնցն ունի Աբովյանի անձի անմոռաց բնութագրական. «Աբովյանն այն անձերից էր, որ աշխարհ են գալիս խորհուրդը ճակատին և երազները հոգում» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>41</sup>:

Գրականագիտական կարևոր դրույթներ կան «Պեշիկթաշյան և կցորդ խնդիրներ» հոդվածում, որը գրվել է 1931-ին Փարիզում: 1928 թ. դեկտեմբերին Փարիզում մի խումբ հայ մտավորականներ, որոնց թվում Ազոնցը և Լևոն Շանթը, հիմնում են «Հայ գրական ակումբ» խումբը, որի նախագահն է ընտրվում Ազոնցը: Սա նշանակում է, որ ժամանակակից հայ գրականությունը և գրականագիտությունը ևս եղել են հայագետի ուշադրության կենտրոնում:

Ազոնցը զարմանալի ընդհանուր գծեր է տեսնում հայ միջնադարի և եվրոպականի միջև. հայկական ունի հին շրջան, միջին տաղասացիկ շրջան, կեղծ-դասականություն և ուսմանտիզմ: Հայագետը չի ընդունում այն մտավորականներին, որոնք կրոն և ազգ համարում են տարբեր բաներ: Նա զգուշացնում է, որ ամեն կողմից հայերը շրջապատված են հայերի միասնությունը քայքայել կամեցողներով. «Երբ գալլերը մտնում են հոտի մեջ, եղբայրության աղերսներն անիմաստ են գալլի բերանում և եղկելի ոչխարի բերանում, որ ուրիշ կերպ չէ հասկացվում, քան «եկ և կեր ինձ»» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>42</sup>:

Մեծարժեք է 1903-ին գրված «Գրական նշմարներ, դեկադանս և սիմբոլիզմ» հոդվածը: Մի քանի տարիներ ապրելով արտասահմանում և մոտիկից չփվելով Եվրոպայի քաղաքակիրթ երկրների գրական կյանքի նորամուտ հոսանքներին՝ Ազոնցն այդ հոդվածում ներկայացնում է գրականագիտական իր նոր ընկալումները, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց արժեքը:

Հատկապես հարուստ է գիտնականի բյուզանդագիտական ժառանգությունը. այն երկճյուղ գիտական ու ճանաչողական արժեք ունի: Նախ ներկայացնում է Բյուզանդիայի պատմության կարևորագույն իրադարձությունները և հետո այդ պատմության նշանավոր դեմքերին, որոնք ազգությունամբ հայեր են եղել:

«Հայ գիտական դեմքեր Բյուզանդիայում» ծավալուն հոդվածը նա գրել է 1930-ին: Գիտնականի կարծիքով հայերի գերիշխանությունը Բյուզանդիայի արքունիքում սկսվում է ոչ թե Վասիլ Մակեդոնացուց, այլ Լևոն V Հայկազն կայսրից, այսինքն IX դարի սկզբից:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 536:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 556:

Ներկայացնելով Լևոն Փիլիսոփայի անտիկ գիտությունից IX դարում կատարած նորամուծությունները՝ Ադոնցը շեշտում է, որ թեև Լևոնը հայ էր, սակայն նրա նվաճումներն արդյունք են բյուզանդական կրթության: Նրա կարծիքով Լևոն Փիլիսոփայի նվաճումները Հայաստանում արդեն VII դարում իրականացրել էր հանճարեղ Անանիա Շիրակացին, վերջինս ապրել է VII դարում և հայ դպրության մեջ նույն տեղն է գրավում, ինչ որ Լևոնը՝ բյուզանդականում<sup>43</sup>: Ադոնցն ապացուցում է, որ XIV դ. նշանավոր բյուզանդացի մաթեմատիկոս Արտավազդը, որը փայլում էր ստույգ գիտությունների մեջ, նույնպես հայ էր<sup>44</sup>:

1928-ին Ադոնցը բյուզանդագիտական նոր հայտնագործություն կատարեց «Դիգենիա Ակրիտաս» բյուզանդական դիցազնավեպի պատմական հիմքը» հետազոտությունում: Նա ապացուցում է, որ դյուցազներգությունը հունական չէ, որովհետև հերոսների ծննդավայրն ու գործունեության վայրը Եփրատի հովիտն է, ու դյուցազներգության գլխավոր հերոսը հայկական ծագում ունի, և նրա քաջագործությունները տեղի են ունենում Արևմտյան Հայաստանում<sup>45</sup>:

Բյուզանդագիտական շարքի հոգևածներում հատկապես ուշադրով են «Աշոտ Երկաթ թագավոր Հայոց» և «Բուղարների արքա Սամուել Հայկազն» ուսումնասիրությունները:

#### Գիտնականի նամակները

Ադոնցի Երկերի է հաստորը նրա նամականին է՝ 135 նամակներով ուղղված իր ապրած ժամանակաշրջանի նշանավոր մարդկանց, հայտնի պարբերականների խմբագիրներին՝ հայկական ու եվրոպական:

Ադոնցի նամակներում գրեթե ոչինչ չենք տեսնում նրա կենցաղին վերաբերող. ամեն ինչ կապված է սկզբում ուսման, իսկ հետո՝ գիտական, հասարակական գործունեության հետ: Առաջին շրջանի նամակներում մեծ թիվ են կազմում Ն. Մառին ուղղված նամակները, որոնք գրված են Եվրոպայի ամենատարբեր քաղաքներից ու կապված են ուսման խնդիրների հետ: Այդ նամակներում, որոնք գերակշիռ մասով ուղևորներն են, Ադոնցը պատմում է ուսման հետ կապված իր ձեռքբերումների, ապագա նպատակների, Եվրոպայի քաղաքներից ու գիտնականներից ստացած տպավորությունների մասին: Նամակներում ապագա նշանավոր բյուզանդագետը հաճախ է խոսում բյուզանդական աղբյուրներում իր կատարած հետազոտությունների մասին՝ դրանք շարունակ համեմատելով հայ մատենագիրների հաղորդածների հետ:

1920 թ. նոյեմբերի 7-ին պրոֆեսորը զայրալից նամակ է ուղարկել Լոնդոնի «Թայմս» թերթի խմբագրին: Կարծես այսօր է գրվել այդ նամակը: Նա զայրույթով հիշեցնում է, թե ինչպես ֆրանսիացի գեներալները սեթևեթում են թուրքական ավազակների հետ Կիլիկիայում ապաստանած մի բուռ հայերի դիակների վրա: Նա քննադատում է Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարողներին, որոնց խղճի վրա ընկած է Հայկական հարցը ծանր

<sup>43</sup> Ն. Ա. Դ. Կ. Ե. Երկեր, հ. Ե, Երևան, 2012, էջ 76:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>45</sup> Նույն տեղում, էջ 101:







Հայագետը հստակ ներկայացնում է Հուստինիանոսի դարաշրջանի Արևելյան Հայաստանի հոգևոր իշխանապետերին՝ իրենց եպիսկոպոսական թեմերով: Մասնագետներն ըստ այդ փաստերի ամբողջական պատկերացում կարող են ունենալ Լուսավորչի հիմնած հայկական եկեղեցու VI դարում ունեցած թեմական խմբավորումների մասին:

Գրքում կան փաստեր, որոնք վկայում են Հայ նախարարների հավատարիմ լինելն ազգային եկեղեցուն՝ այն քաջ գիտակցությամբ, թե եկեղեցին ազգային ինքնուրույնության մեծագույն հիմնաքարերից մեկն է: Անգամ Արևելյան Հայաստանից պարսիկներից հալածական Արևմտյան Հայաստան տեղափոխված նախարարները հրաժարվում էին իրենց արված առաջարկից՝ անցնել հունական հավատին ու հավատարիմ էին մնում հարազատ ազգային եկեղեցուն<sup>52</sup>:

Աշխատության XIV գլուխը նվիրված է Հայ նախարարությունների տոհմական հիմքերին: Այս հատվածում պատկերված է Տիգրան Մեծի ժամանակ նրա կայսրության մեջ մտած տարալեզու և տարազգի ազնվական դասի նկատմամբ Հայոց արքայի դիվանագիտական ճշգրիտ վերաբերմունքը: Հայագետը գտնում է այն ընդհանրությունները, որոնք շփման կետեր ունեն Հայաստանի ու եվրոպական երկրների ֆեոդալական կարգերի միջև: Նա նաև իր կատարածի համար որպես եզրահանգում դնում է հետևյալ կարևոր միտքը. «Նախարարության հարցի մեր մեկնաբանությամբ լույսի մի ճառագայթ է շողում այն մշուշի մեջ, որ կախված է Հայ հեռավոր անցյալի վրա՝ մինչև Արշակունիների շրջանը, և դրվում է Հայոց պատմական կյանքի հետագա ընդարձակ շրջանի գիտական ըմբռման հիմքը՝ մինչև մոնղոլական արշավանքների դարաշրջանում նախարարության ոչնչացումը»<sup>53</sup>: Նմանատիպ մտքի հանդիպում ենք Մառի «Անի» կոթողային աշխատության մեջ. «Անին համենայնդեպս ավելի հարազատ ու մոտիկ է հին հայկական կենսակերպին՝ նրա ազնվական բնույթով ու դասային հիմքերով, քան թե Հայ ժողովրդի հետագա դիմագծին, երբ քաղաքական լրիվ անկումը և մահմեդականների կողմից շարունակական հալածանքները համահարթեցրին հայերին մեկ դասի մեջ»<sup>54</sup>:

Ազոնցի «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» աշխատությունը լրացնում է միջազգային բյուզանդագիտության մեջ եղած կարևորագույն բացը և մշտապես հետաքրքրելու է Բյուզանդիայի պատմության Հուստինիանոսի դարաշրջանը ուսումնասիրողներին:

Ազոնցը նաև հմուտ լեզվաբան էր: Դա բնականոն իրողություն է նրա նախասիրած գիտական հետաքրքրությունների լայն շրջանակի համար: «Դիոնիսիոս Թրակացին և Հայ մեկնիչները» աշխատության ներածական խոսքում նա բացատրում է, թե Հայ միջնադարի մեկնիչներն ինչպես էին հասկանում ձևաբանության ու շարահյուսության կանոնները: Ըստ դրա էլ ներկայացվում է, թե որն է շեշտը, ինչ է հազներգությունը, ինչ է կետը, ինչ է

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 325:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 467:

<sup>54</sup> Н. Я. Марр. Ани, столица древней Армении (историко-археологический набросок). М., 1898, с.199.

տառը, որն է վանկը, որն է բառը: Առանձնացված քննվում են խոսքի մասերը՝ գոյականը, բայը, դերբայը, դերանունը, մակբայը, շաղկապը:

VII դարից սկսած հայ քերականներն իրենց մեկնություններով ամփոփում են քերականական ու փիլիսոփայական մտքի ճոխ զարգացումը, որը տեղի էր ունեցել նախորդ VI դարում, երբ Հայաստանում ձևավորվեց հունաբան դպրոցի հարուստ ավանդույթը՝ հունարենից կատարված բազում թարգմանություններով:

Իր ուսումնասիրության մեջ Ադոնցը նախ գետնդել է Դիոնիսիոս Թրակացու քերականության բնագրի թարգմանությունը՝ նույն էջի վրա դնելով նաև հունարեն բնագիրը, ապա անցել հայ մեկնիչների տարբեր ձեռագրերից հանված բնագրերին: Քանի որ նա հունարենից թարգմանել է գրաբար, ապա հարկ է համարել որոշ քերականական եզրույթների բացատրություն տալ նաև առավել մատչելի գրաբարով:

Առաջին բնագիրը, որն առկա է գրքում, Դավիթ Քերականի մեկնությունն է, որն ըստ Ադոնցի երկար ժամանակ վերագրվել է V դարավերջի և VI դարասկզբի մեծագույն հայ փիլիսոփա Դավիթ Անհաղթին: Սակայն իրականում Դավիթ Անհաղթին ու Դավիթ Քերականը լիովին տարբեր անձիք են, և այդ հարցը ճշգրտել է Ադոնցը:

Ադոնցի ճշգրտումն առավելապես հաստատվեց, երբ 1956 թ. ակադեմիկոս Գևորգ Ջահուկյանը «Բանբեր Մատենադարանի» պարբերականում տպագրեց Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրական հավաքածուի մեջ իր գտած Դավիթ Քերականի՝ Դիոնիսիոս Թրակացու երկի մեկնության ամբողջական բնագիրը<sup>55</sup>:

Դավիթ Քերականն իր մեկնությունն սկսում է «Նախերգան» հատվածով, որի սկիզբը գոյի՝ այսինքն մարդու, ով լինելու բացատրությունն է: Մարդը, ըստ Դավթի, բաղկացած է երկու գոյությունից՝ բանական հոգուց և գործնական մարմնից: Այդ երկու գոյությունները միմյանց շաղկապված են, և նրանցից յուրաքանչյուրն իր դերն է կատարում: Մարդու վերջնական բնութագիրն է՝ մարդը բանական կենդանի է և մահկանացու<sup>56</sup>: Դավիթ Քերականն իր մեկնության մեջ ներկայացնում է գրականագիտական գիտելիքների անտիկ ժամանակների պաշարն ու ընկալումները: Սահմանում է հին աշխարհի դրամատիկական սեռի երկու ժանրերը՝ ողբերգությունն ու կատակերգությունը:

Գրիգոր Մագիստրոսն էլ իր մեկնության մեջ պահանջում է, որ յուրաքանչյուր ոք ճշգրիտ քերականական կանոններով խոսի: Քերականության դերը հենց դրանում է: Անտիկ աշխարհում Հոմերոսի երկու գործերը՝ «Իլիականը» և «Ոդիսականը», եղել են ուղեցույցներ գեղեցիկ ու դիպուկ խոսքի: Մագիստրոսի կարծիքով լեզվի քերականությանը տիրապետելը պարտադիր է բոլոր գիտաճյուղերով զբաղվողներին: Եվ քանի որ կատարյալ լեզուն համարվել է Հոմերոսին, ապա Մագիստրոսը համառոտ խոսում է Հոմերոսի (մ. թ. ա. VIII

<sup>55</sup> Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1956, № 9, էջ 241–264:

<sup>56</sup> Ն. Ադոնց. Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ 79–80:

դար) կենսագրության որոշ փաստերի մասին: Հոմերոսի ծնողները եղել են բանաստեղծներ ու երգիչներ: Հոմերոս բառը թարգմանվում է կուրուլթյուն<sup>57</sup>:

Ադոնցի կարապի երգը դարձավ 1946-ին Փարիզում հետմահու Ֆրանսերենով հրատարակված «Քննական պատմություն Հայոց» աշխատության առաջին հատորը: Մուշեղ Իշխանը վկայում է, թե Ադոնցը «Քննական պատմություն Հայոց» աշխատությունը համարում էր իր լավագույն գործը, որի 4 հատորների շնորհիվ կկարողանար աշխարհին ներկայացնել Հայ ժողովրդի ամբողջական ու ճշգրիտ պատմությունը<sup>58</sup>: Սակայն սաստկացած հիվանդությունը, երկրորդ համաշխարհային պատերազմը վերջ դրին նրա կյանքին: Ականատեսները, որոնցից մեկն էր Հ. Էսեկուլյանը, վկայում են, թե Ադոնցը կյանքից հեռացել է գրիչը ձեռքին, նման այն քաջ ու վեհ զորահրամանատարին, որը ծանրորեն վիրավոր, մինչև վերջին շունչը կռվում է թշնամու դեմ<sup>59</sup>:

«Քննական պատմություն Հայոց» երկի առաջին հատորի համար, ինչպես ասվեց, առաջաբան է գրել Ֆրանսիական ակադեմիայի անդամ Ռընե Գրուսեն: Ֆրանսիացի նշանավոր պատմաբանը հիացած է Ադոնց գիտնականի անձով ու գիտելիքների անսպառ պաշարով: Նա շեշտում է, թե որքան բազում լեզուների էր Ադոնցը տիրապետում՝ սանսկրիտ, հին պահլավերեն, բյուզանդական հին հունարեն, սեպագրեր և այլն: Նա միաժամանակ հնագետ էր, պատմաբան, բանասեր, «ուստի նրա ամենափոքր ծանոթագրությունն իսկ գիտական նշանակություն ունի»<sup>60</sup>:

Գրուսենի կարծիքով Ադոնցի Հայաստանի պատմության հատորը ներկայացնում է Հայաստանը մինչև մեր դարաշրջանից առաջ VI դարը, և այդպիսի մի գործ կարող էր գլուխ գալ, եթե մեկը տեղյակ էր ուրարտագիտության, ասուրագիտության, իրանագիտության վերջին հայտնաբերումներին. «Ադոնցը միանգամայն վաստակավոր ուրարտագետ, ասուրագետ, իրանագետ էր»<sup>61</sup>:

Ադոնցն ապացուցում է, որ Բիայնա և Նաիրի երկրում Վանա լճի շուրջը, կազմավորվեց Ուրարտու պետությունը, որի արքաներից Արամեի անունով հարևան ազգերն այն կոչեցին Արմենիա (Հայաստան): Նա հավաստում է, որ ուրարտական քաղաքակրթությունը հայկական և դասական քաղաքակրթություն է, և դա հիմնավորում է սեպագրերը վերլուծելով: Հայերը հնդեվրոպացիներ լինելով՝ ստեղծել են մի մշակույթ, որն իր արմատներով ձգվում է Ք. ծ. ա. XVII դարից էլ ավելի վաղնջական ժամանակներ:

Տեղին է Գրուսենի հետևյալ միտքը մեջբերել ամբողջովին. «Հայկական ամրոցը, ինչպես ուրարտական բաստիոնն էր, կպաշարվի: Անկասկած, նա կհարմարվի աքեմենյան գերիշխանությանը, որը, այնուհանդերձ, ինչպես Անաբազիրն է վկայում, կհարգի նրա ինքնավարությունը: Նա նույնիսկ կխուսափի մակեդոնական հաղթանակի զոհ դառնալուց, և դրանից հետո հեղինակատական անիշխանության շնորհիվ է, որ հին Հայաստանը կհասնի իր

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 226:

<sup>58</sup> Մ. Ի շ ի ա ն. նշվ. աշխ., էջ 38–39:

<sup>59</sup> Ն. Ա դ ո ն ց. Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 13:

<sup>60</sup> Նույն տեղում, էջ 25:

<sup>61</sup> Նույն տեղում, էջ 26:

ընդարձակման գաղաթնակետին, և դա կլինի Տիգրան թագավորի օրոք: Սա մի չճանաչված մեծ իշխող էր, որ, անկասկած, շատ ավելի մեծ արժանիքներ ունի, քան նրա ժամանակակից Միհրդատը, որով հիացել է պատմությունը, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ Միհրդատը փայլուն կերպով «ինքնասպանության մղեց իր պետությունը», մինչդեռ Տիգրանը իր ժողովրդի ապրելու իրավունք ապահովեց հավիտենականության համար» (ընդգծումը մերն է – Ա. Դ.)<sup>62</sup>:

Գրուսեն իրավացիորեն մեղադրում է Բագրատունիների հայ թագավորությունը և Անիի կործանումը կազմակերպած բյուզանդական պետությունը, որն անհեռատեսորեն հետո թուրքերին հանձնեց այդ երկիրը<sup>63</sup>:

Բնականաբար, Ադոնցը Հայաստանի պատմությունն սկսում է նախապատմական ժամանակներից, որը հնարավոր է դառնում հնագիտական պեղումների շնորհիվ: Ցավոք, Ադոնցի ժամանակ հնագիտական այդ պեղումներն եղել են ոչ մեծաքանակ:

Հայաստանը հնագույն դարաշրջանում ներկայացնելու համար Ադոնցը պատկերում է Արևելքի պատմությունն ընդհանուր գծերով: Նրա կարծիքով Հայաստանի պատմությունը մթուշյան մեջ է չումերաաքաղական դարաշրջանում: Հայաստանի պատմության առաջին հատորում պատմաբանը վերծանված ներկայացնում է բազմաթիվ սեպագիր արձանագրություններ<sup>64</sup>, որոնցից պարզ է դառնում, որ Ուրարտու պետության մեջ շատ զարգացած էին խաղողագործությունն ու գինեգործությունը, գինագործությունը, մետաղների մշակումը, արհեստները, ճարտարապետությունը, անասնապահությունն ու երկրագործությունը: Ադոնցը Ուրարտուի պատմությունն ավարտում է հետևյալ եզրահանգմամբ. «Պայքարել Ասորեստանի կատաղության ու մոլեգին կրքերի դեմ, փակել նրա ճանապարհը դեպի Նաիրյան երկրները, դա մի ազնիվ առաքելություն էր, որ Ուրարտուն պատվով կատարեց, այսպիսով նշանակալի ծառայություն մատուցելով քաղաքակրթությանն ու մարդկությունը»<sup>65</sup>:

Ուրարտուին փոխարինելու է գալիս Հայաստանը՝ ընդգրկելով նույն աշխարհագրական տարածքը: Ադոնցն իր «Քննական պատմություն Հայոց» աշխատության առաջին հատորը թողել է անավարտ՝ հասցնելով մինչև Աքեմենյանների Դարեհ Առաջինի ժամանակները:

«Քննական պատմություն Հայոց» գրքի առաջին հատորին կցված են նյութեր, որոնք պատմաբանը պետք է գետեղեր Հայաստանի պատմության երկրորդ և երրորդ հատորներում: Այդ հատվածները մեր երկրի պատմությունը հասցնում են Ք. ծ. հ. VI դարի կեսը: Կցված հատվածներից ամենաուշագրավը «Հայաստանը Տիգրան II Մեծի գահակալության ժամանակներում» բաժինն է: Այն մանրամասն է և նրանում պատկերված է, թե ինչպես հռոմեացի պատմիչները չէին կամենում տեսնել Տիգրանի գովեստի արժանի գործերը: Տիգրանը, օրինակ, քոչվոր արաբներին հարկադրեց փոխել իրենց կենսակերպը, դառնալ նստակյաց ու զբաղվել առևտրով:

<sup>62</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 172–213:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 319:

իր պատմության Տիգրան Մեծին նվիրված հատվածն Ադոնցն ավարտել է հետևյալ նախադասությամբ. «Տիգրանի հասցեին ցանկացած բնույթի շատախոսությունից և զրպարտությունից հետո, պատմիչը (խոսքը Պլուտարքոսի մասին է – Ա. Դ.) նույնքան անապասելի, որքան և իրական խոստովանություն է անում, թե Լուկուլլոսը բազմաթիվ մարտերից հետո ի դեմս Տիգրանի հանդիպել է անպարտելի և «վսեմ քաջությամբ օժտված թշնամու»<sup>66</sup>:

#### Եզրակացություն

Ադոնցի գիտական ժառանգությունը բյուզանդագիտության ու հայագիտության բնագավառներում լի է բազմաթիվ գիտական հայտնաբերություններով, որոնց արժեքը դարերի համար է:

Ադոնցի տարբեր լեզուներով գրված գիտական, հրապարակախոսական հոդվածները լույս են տեսել պատկառելի ցանկ կազմող եվրոպական, ռուսական, հայկական պարբերականներում:

Ադոնցն իր կյանքը նվիրել է գիտությունն ու հայրենիքը նոր լույսով օտարներին ներկայացնելու սրբազան գործին: Նա ինչպես Աբովյանի հոգեզավակն էր և նվիրումով, գիտական ճշգրտությամբ մարդկությանը ներկայացնում էր, թե որքան կարևոր դեմք է եղել Տիգրան Մեծը, ինչպիսի հզոր դեր են կատարել հայ արքաները Բյուզանդիայի Մակեդոնյան հարստության ժամանակ՝ մոտ 200 տարվա ընթացքում Բյուզանդիան դարձնելով քաղաքակրթության ու գիտության ջահակիրը աշխարհում: Նա նաև Հայոց եկեղեցու պատմության խոր գիտակն էր ու Լուսավորչական եկեղեցու դերն անփոխարինելի է համարում հայ ժողովրդի ինքնուրույնությունը պահպանելու սուրբ գործում: Հայ դատի երդվյալ պաշտպանն էր և ազդու ու հիմնավորված հոդվածներով եվրոպական մամուլում մերկացրել է թուրքերի հայաջինջ քաղաքականությունը:

Անլիտա Դոլուխանյան – Բ. Գ. Դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին և միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 33 գրքի և շուրջ 650 հոդվածի: aelita.dolukhanyan@gmail.com

#### REFERENCES

- Adonts N. Erker, h. I, Yerevan, 2006; h. II, Yerevan, 2006; h. III, Yerevan, 2008; h. IV, Yerevan, 2009; h. V, Yerevan, 2012; h. VI, Yerevan, 2012; h. VII, Yerevan, 2014; h. VIII, Yerevan, 2016 (In Armenian).  
 “Banber Matenadaran”, 1956, № 9, (In Armenian).  
 Chamchyants M. Patmutiun Hayots, h. II, Yerevan, 1984 (In Armenian).  
 Dowsett Ch. Sayat-Nova, An 18th – century troubadour. Lovanii, 1997.

<sup>66</sup> Նույն տեղում, էջ 509:

- Eznik de Kolb. De Deo. Paris, 1959.  
 Eghishe. Vasn Vardanay ev Hayots paterazmin, Yerevan, 1989 (In Armenian).  
 Gumilyov L. Entsiklopedia. M., 2017 (In Russian).  
 Gh. Sebastatsi. Davit Beki patmutyune, Yerevan, 1988 (In Armenian).  
 Koryun. Vark Mashtotsi, Yerevan, 2005 (In Armenian).  
 Marr N. Ya. Ani, stolitsa Armenii (Istoriko-arkhelogicheskoy nabrosok. M., 1898 (In Russian).  
 Ishkhan M. Erekh medh hayer, Beyrut, 1952 (In Armenian).  
 “Nouveau petit Larousse illustré”. Paris, 1932.  
 “Petit Robert – 2”. Paris, 1988.

## ВИЗАНТИНИСТ И АРМЕНОВЕД, ОБЛАДАЮЩИЙ МЕЖДУНАРОДНОЙ СЛАВОЙ

АЭЛИТА ДОЛУХАНЫАН

### Р е з ю м е

*Ключевые слова: Н. Адонц, Санкт-Петербург, арменовед, византинист, монументальные произведения, Брюссель, Париж, Армянский вопрос, Армянская церковь, многоязычный.*

Николай Адонц (1871–1942) один из известных армянских ученых, получивших блестящее образование в России и Европе. Во время учебы в университете Санкт-Петербурга и потом, когда он совершенствовал свои знания в известных учебных центрах Европы, в Лондоне, в Париже, в Вене, в Страсбурге и в Мюнхене, Адонц пользовался поддержкой великого национального благотворителя Александра Манташянца.

Восемь томов сочинений Адонца были изданы Ереванским государственным университетом при поддержке Армянского отделения Фонда Галуста Гюльбенкяна. Адонц не оставил автобиографических воспоминаний. Они были бы чрезвычайно интересны, потому что его жизнь была удивительной.

Тигран Великий (95–55 гг.) был для Адонца самой любимой исторической личностью. Он фактически подтверждает, что Тигран проявил себя как мировой самодержавец и просветитель, а его деятельность требует нового освещения. Адонц представляет великие дела и военные успехи представителей княжеского дома Мамиконянов в Византийской империи. Весьма интересно исследование «Слава Багратидов» Адонца, представляющее ветви армянского царского дома Багратуни в Грузии, Кавказской Албании и Арцахе. В обширной статье «Историческая основа и идеологическая ценность романа «Давид Бек» историк применяет исследовательский подход к описанию исторических событий романа Раффи «Давид Бек».



Foundation. Adonts left no autobiographical memories. They would have been extremely interesting, since his life was really amazing.

Tigran the Great (95–55 BC) was the most beloved historical figure of Adonts. He actually confirms that Tigran manifested himself as a world sovereign and enlightener, and his activities require new elucidation. Adonts presents the great deeds and military successes of the representatives of the princely house of Mamikonians in the Byzantine Empire. The study “The Fame of Bagratids” by Adonts is very interesting; it represents the branches of the Armenian royal house of Bagratids in Georgia, Caucasian Albania and Artsakh. In his extensive article “The Historical Basis and Ideological Value of the Novel David Bek”, the historian takes an exploratory approach while describing the historical events of the novel David Bek by Raffi.

Especially rich is the heritage of the scientist in Byzantine studies, which has two branches of scientific and cognitive significance. Firstly, it presents important events of the history of Byzantium, and then the famous figures of this history, who were Armenians by nationality. In 1928 Adonts made a new discovery in Byzantine studies, exploring the “Historical basis of the Byzantine epic Digenis Akritas”. He proved that the epic poem was not Greek, since the homeland and place of activity of the main hero are the Euphrates valley, and his exploits take place in Western Armenia.

Adonts was a devoted defender of the Armenian Cause and dedicated many articles to this issue.

Adonts left three monumental monographs as a legacy to science. These are: Armenia in the Era of Justinian (1908), Dionysius of Thrace and Armenian Commentators (1915) and the posthumously published Critical History of Armenia (1946).

The scientific heritage of Adonts in the field of Byzantine studies and Armenology is rich with many scientific discoveries, whose value will be preserved forever.

*Aelita Dolukhanyan – Doctor of Sciences in Philology, Professor, Correspondent Member of the NAS RA, Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Ancient and Medieval Armenian Literature, folklore, contemporary Armenian Literature, methodology of teaching literature, literary criticism, Armenology, literary connections. Author of 33 books and over 650 articles. aelita.dolukhanyan@gmail.com*